

12. ԿՅՈՌԹՆՈՒԿԸ ՎԸԵՐ ԱԽՃԻԿՅ Ա ՏԱՌԱԼ, ԸՆԴՐԱ ՀԱՔՅԱԹԸ

Իլալ ա չիլալ մին թաքավեր։ Էս թաքավերիս էլ իլալ ա մին տղա։ Էս տղան քյինացալ ա ծովին ղրաղերքը. ման կյալ, ետավ ծարավալ ա, նի յա մտալ գյամին, թա ճուր խմի, մին կյոռթնուկ լոք ա տվալ, փեշկան կացալ։ Էս թաքավերին տղան հիշտեղ վըեր քյինացալ ա, էս կյոռթնուկն էլ փեշկան կացած։ Ուրուկյունը վըեր քյինացալ ա տոն, էն կյոռթնուկը փախալ ա, նի մտալ տոլաբը, մին վախտ էս կյոռթնուկը խեցկը հանալ ա, տիրալ տոլաբումը, ինքյը եր իլալ ղեհը։ Թաքավերին տղան եկալ ա տըեսալ մին շափաղ պատին յրան. եշալ ա տըեսալ ղեհին մին հուլումալագյ ախճիկյ։ Էս տղան պիրալ ա էս ախճկանը ուրան յրան օխտը օր, օխտը քշեր փսակալ։

Ըստեղ մարթըկնեգյ ըն տառալ, թաքավերին տղան ասալ ա. «Քյինա թաքավերին ծերքը պաչիս։ Քյինացալ ա պաչալ, եկալ։ Թաքավերին տղան ասալ ա. «Պիր կյոռթնուկի խեցկըտ քցենքյ կրակը»։ Նա էլ ասալ ա, թա. «Չէ»։ Ախրը քիցալ ա կրակը։ Կնեգյը ասալ ա. «Տե՛ս, վըեր քիցեցիր կրակը, քյեզ շատ զուրար ա նի կյալուս»։

Ետնան թաքավերը ղրկալ ա ուրան տղին հետան։ Էս տղան էլ քյինացալ ա։ Թաքավերը ասալ ա. «Էտ կնեգյը ինձ տոս»։ Նա էլ ասալ ա, թա. «Չէ՛, տալ չըմ»։ Թաքավերը ասալ ա, թա. «Ընդե քյեզանից մին զատ կօղեմ, թա վըեր էն տվիր՝ կնեգյը քեզ, թա վըեր չէ՝ ինձ ինի»։ Ասալ ա, թա. «Հա»։ Նա էլ ասալ ա. «Քյեզա-

նից մին խնձոր կօղեմ, վրեր սաղ ղուշունրս կեսը օտեն, կեսը մնա»։ Քյինացալ ա կնգանը քշտին բեքեփ նստալ, կնեգյն էլ ասալ ա. «Լավ ա՞, վրեր ասում ի խեցկրս էրիլ մի, տու լիհա էրում իր». մին էլ ասալ ա. «Լավ ա, հելլա ճար կանեմ»։ Ասալ ա, թա. «Քյինա ասի՝ գյամուն թա՛քավեր, գյամուն թա՛քավեր, մին ծեր բաղին պիծի խնձորիցը մինը տո»։ Քյինացալ ա ասալ. «Գյամուն թա՛քավեր, գյամուն թա՛քավեր, մին ծեր բաղին պիծի խնձորիցը մինը տո»։ Նա էլ տվալ ա, ծովիցը տուս ա պիրալ, մարթ ղրկալ թաքավերին հետան, թա. «Ես պիրալ ըմ, տու էլ տար»։

Թաքավերը ուրան ղուշունը ղրկալ ա, թա. «Քյինացեք պիրեքյ»։ Եկալ ըն տարալ կեսը կերալ, կեսը մնացալ ա։ Ըստրհենց շատ զատեր ա ասալ, նա էլ քյինացալ ա պիրալ։ Մին էլ թաքավերն ասալ ա. «Մին կարմունջ շինիլ տո ծովին յրան»։ Եկալ ա կնգանն ասալ. «Էս հունց ա՞նեմ»։ Նա էլ ասալ ա, թա. «Քյինա ասի՝ Գյամուն թա՛քավեր, ամաքյը մին քար ցեց տիրեքյ»։ Նա էլ քյինացալ ա ասալ, ամաքյը մին քար ըն ցեց տիրալ, տառալ ա կարմունջ։

Թաքավերը ասալ ա՝ մին քյինամ տրեսնամ։ Ուրան կնգանն էլ եր ա կալալ, քյինացալ։ Օղացալ ա, թա կարմունջավը անց կենա էն ղոլը, թաքավերին տղան ասալ ա. «Գյամուն թաքավեր, ամաքյը ծեր քարը եր կալեքյ»։ Ամաքյը ուրանց քարը եր ըն կալալ, թաքավերը մին էլ ուրան կնեգյը նի յըն տառալ ծովին մեջը, կտորվալ։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չլսողին։